***Arman J. Kirakossian**, The Armenian Genocide in Contemporary American Encyclopedias, Yerevan, Armenian Genocide Museum-Institute, 2015, 175 p.*

***Արման Ջ. Կիրակոսյան**, Հայոց ցեղասպանությունը ժամանակակից ամերիկյան հանրագիտարաններում, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015, 175 էջ*

Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի շրջանակում լույս տեսավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դիվանագետ Արման Կիրակոսյանի կազմած ժողովածուն[1]: Նրա գիտական աշխատությունների մի մասը ուղղակիորեն առնչվում է Հայոց ցեղասպանության պատմությանը, որոնցից կցանկանայինք առանձնացնել 1894-1895 թթ. հայկական կոտորածների մասին ամերիկյան և բրիտանական մամուլում տեղ գտած վկայություններն ամփոփող գրքերը[2]:

Սույն ժողովածուում Ա. Կիրակոսյանն ընդգրկել է վերջին տասնհինգ տարիներին ամերիկյան շուրջ քառասուն մասնագիտական հրատարակություններում՝ հանրագիտարաններում, հանրագիտարանային բառարաններում, տեղեկատվական ուղեցույցներում և ձեռնարկներում տպագրված՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հոդվածները: Անդրադարձն այդ հրատարակություններին շատ կարևոր է, քանի որ այդ հոդվածների լույսընծայումը վկայում է ոչ միայն Հայոց ցեղասպանության՝ իբրև անհերքելի փաստի հավաստման, այլև ընդունման մասին: Ավելին, այդ հոդվածների հեղինակները, որոնք թե՛ ԱՄՆ-ի և թե՛ այլ երկրների ճանաչված մասնագետներ են, հաստատում են, որ Հայոց ցեղասպանությունը ոչ միայն ցեղասպանագիտության բաղկացուցիչ մասն է, այլև դատապարտվում է նաև միջազգային գիտական առաջադեմ հանրության կողմից:

Ի սկզբանե նշենք, որ սույն հրատարակությունում ի մի բերված ամերիկյան հանրագիտարանների նյութերը հատուկ ուշադրության արժանացնելու փաստը վկայում է օտարերկրյա հեղինակների՝ Հայոց ցեղասպանությանը ճանաչում տալու համար ներդրած ջանքերը գնահատելու մասին: Ա. Կիրակոսյանին հաջողվել է դրանց միջոցով ընդգծել ոչ միայն ամերիկյան հան-

---

[1] Ա. Կիրակոսյանը ՀՀ դեսպանն է Ավստրիայում, ինչպես նաև ԵԱՀԿ-ում ՀՀ առաքելության ղեկավարն ու Վիեննայում գտնվող ՄԱԿ-ի գրասենյակում և այլ միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչը:

[2] Տե՛ս The Armenian Massacres 1894-1895: US Media Testimony, Edited and with an Introduction by Arman J. Kirakosian, Detroit, 2004; The Armenian Massacres 1894-1895: British Testimony, Edited and with an Introduction by Arman J. Kirakosian, Dearborn, 2008.

բագիտարանների գիտական բարձր մակարդակը, այլև պատմական անցյալին առնչվող ու իրականությանը համապատասխանող տեղեկատվության տարածման հնարավորությունը: Այդ հրատարակությունները կարող են մեծ դեր ունենալ ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև ընդհանրապես ցեղասպանության՝ իբրև երևույթի կանխարգելման մասին համակողմանի տեղեկություններ տարածելու գործում:

Ա. Կիրակոսյանն իր համոզմունքն է հայտնում առ այն, որ Հայոց ցեղասպանությունը՝ որպես ճանաչված իրողություն, անկասկած պետք է ճշգրիտ, պատշաճ և արժանիորեն ներկայացվի աշխարհում լույս տեսնող հանրագիտարաններում: Նա վկայակոչում է Հայկական ազգային ինստիտուտի (Armenian National Institute) տնօրեն Ռուբեն Ադալյանի կարծիքը, որը մի շարք հանրագիտարանների (Encyclopedia Americana, The New Encyclopedia Britannica, Encyclopedia of Middle East, Encyclopedia of Islam և այլն) ուսումնասիրությամբ նշել է, որ XX դարի վերջին հանրագիտարանային գրականությունը արտացոլել է վերաքննողականությունից բխող՝ իրականության ձևափոխված պատկերը և արձանագրել ժխտողականություն քարոզող հեղինակների մուտքը հանրագիտարանային միօրինականացված պատմագրության ասպարեզ[1]: Այսինքն՝ այդ հանրագիտարաններում 1915 թ. իրադարձությունները չէին գնահատվում իբրև ցեղասպանություն:

Հեղինակի համոզմամբ պատմության խեղաթյուրումն ամրապնդվում է Թուրքիայի հետևողական ժխտողական դիրքորոշմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները Միացյալ ազգերի կազմակերպությունը որակել է իբրև «XX դարի առաջին ցեղասպանություն» (1973), ինչպես նաև «ցեղասպանության օրինակ» (1985), միաժամանակ Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է ոչ միայն միջազգային կազմակերպությունների, այլև արդեն ավելի քան քսան պետության կողմից:

Այդուհանդերձ, մարդկության դեմ իրականացված հանցագործությունների վերաբերյալ 1970-1980-ական թվականներին վերլուծական և համեմատական գիտական ուսումնասիրությունները համալրում են ցեղասպանագիտության անդաստանը: Անտարակույս մեծ է նաև 1994 թ. Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի հիմնադրման նշանակությունը: Ըստ հեղինակի մեջբերած՝ քաղաքագիտության պրոֆեսոր Ալան Ուայթհորնի կարծիքի՝ «անհապաղ առաջ էր եկել ցեղասպանության հանրագիտարանների և բառարանների անհրաժեշտություն» (էջ 6): Նմանտիպ առաջին հրատարակությունը ցեղասպանագիտության առաջատար մասնագետներից մեկի՝ Իսրայել Չառնիի խմբագրությամբ 1999 թ. լույս ընծայված «Ցե-

---

[1] Տե՛ս **Adalian R. P**. Treatment of the Armenian Genocide in Respective Encyclopedias // **Charny I. W**. (Ed.) Encyclopedia of Genocide, Santa Barbara, Oxford, 1999, vol. 1, p. 71, 72.

ղասպանության հանրագիտարան» երկհատորյակն էր[1], ուր արևմտահայության հանդեպ իրագործված հանցագործությունը որակվեց որպես ցեղասպանություն: Այդ ժամանակից ի վեր՝ ԱՄՆ-ում հրատարակվեցին մի շարք մասնագիտական հանրագիտարաններ և բառարաններ[2]:

Փաստորեն, վերջին տասնհինգ տարվա ընթացքում իրավիճակն ամբողջությամբ փոխվեց: Նշված թեմատիկ և մի շարք այլ ժամանակակից հանրագիտարաններ ներառել են հատուկ հոդվածներ՝ նվիրված մասնավորապես Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև դրան առնչվող թեմաներին: Ցեղասպանության՝ իբրև երևույթի առաջատար շատ մասնագետների ջանքերը, ինչպես նաև մի շարք երկրների հասարակայնության դիրքորոշումն ու Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի համատեղ գործողությունները շրջադարձորեն փոխեցին թե՛ համաշխարհային հանրության կարծիքն ու վերաբերմունքը Հայոց ցեղասպանության նկատմամբ և թե՛ պատմագիտության ասպարեզում առկա իրավիճակը: Հայոց ցեղասպանությունն ամրապնդեց իր դիրքերը և՛ որպես հասարակական իմացություն (public knowledge), և՛ որպես ճանաչված պատմական փաստ:

Գրախոսվող հրատարակության մեջ բազմակողմանիորեն լուսաբանվում են Հայոց ցեղասպանությանն առնչվող մի շարք հարցեր: Ի տարբերություն հանրագիտարաններ կազմելու տարածված՝ այբբենական կարգով հոդվածների ներկայացման փորձուսման՝ Ա. Կիրակոսյանը նյութը համախմբել է ըստ բաժինների և թեմաների, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ պատկերացում կազմել 16 գլուխների բաժանված գրքի բովանդակության մասին: Նյութի համախմբումը կատարված է ոչ միայն ըստ պատմական և ժամանակագրական սկզբունքների, այլև հայեցակարգային է: Թվարկենք գլուխների վերնագրերը՝ Ցեղասպանություն եզրույթը և հայերի ոչնչացումը, Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի համեմատությունը, Հայկական հարցը, 1894-1896 թթ. հայկական կոտորածները, Ադանայի ջարդը, Հայոց ցեղասպանությունը, Հայոց ցեղասպանության բրիտանական և ամերիկյան արձագանքը, Հայոց ցեղասպանությանն առնչվող անձինք, Հայոց ցեղասպանությունը և ռազմական դատավարությունները Կոնստանդնու-

---

[1] Encyclopedia of Genocide. Տե՛ս նաև ֆրանսերեն թարգմանությունը՝ Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israël W. Charny, Toulouse, 2001.

[2] Տե՛ս օրինակ՝ **Kurtz, Lester R.** (Editor), Encyclopedia of Violence, Peace and Conflict, 3 vols., San Diego, 1999; **Hickey E**. (Editor), Encyclopedia of Murder and Violent Crime, Thousand Oaks, CA; London, 2003; **Shelton, Dinah. L**. (Editor), Encyclopedia of Genocide and Crimes against Humanity, 3 vols., Farmington Hills, Ml: Thomson Gale, 2005; **Horvitz, Leslie Alan** and **Catherwood, Christopher** (Editors), Encyclopedia of War Crimes and Genocide, New York: Facts on File, Inc., 2006; **Totten, Samuel and Bartrop, Paul R**., (Editors), Dictionary of Genocide, 2 vols., Westport, 2007; **Bloxham, Donald** and **Mosses, Dirk A**. (Editors), The Oxford Handbook of Genocide Studies, New York, Oxford University Press, 2013; **Mikaberidze, Alexander** (Editor). Atrocities, Massacres, and War Crimes, 3 vols., Santa Barbara, 2013:

պոլսում 1919-1920 թթ., Հայոց ցեղասպանությունը և հետվնասվածքային սթրեսային խանգարումները, Հայոց ցեղասպանությունը և սեռասպանությանը (gendercide) ու մայրությանը վերաբերող խնդիրները, Հայոց ցեղասպանության վավերագրումը, Հայոց ցեղասպանության ժխտումը, Հայկական Սփյուռքը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, Հայոց ցեղասպանությունն արվեստում ու գրականության մեջ:

Հեղինակին հաջողվել է տրամաբանական հստակ կառուցվածքային մոտեցմամբ լուծում տալ բավականին ծավալուն նյութին, ստեղծել բովանդակալից աշխատություն, որն ընդգրկում է Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածների (105 անուն) և դրանք ամփոփող հանրագիտարանների ցանկերը: Ա. Կիրակոսյանը ներկայացրել է նաև խնդրո առարկա հոդվածների մատենագիտությունը: Ի դեպ, այդ հանրագիտարաններում անդրադարձ է կատարված շուրջ 150 ազգությունների (այդ թվում՝ հայ և թուրք) պատկանող հեղինակների՝ 200-ից ավելի անգլերեն աշխատություններին (դրանցից մի քանիսը՝ թարգմանված են ֆրանսերենից, գերմաներենից և թուրքերենից), որոնք տպագրվել են XIX դարի վերջին և XX դարում:

Ամերիկյան հանրագիտարանային հրատարակություններում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հոդվածների կարևորությունն այն է, որ պատմական անցյալը ճշմարտացի է ներկայացված, ինչը, փաստորեն, դուրս է գալիս ներհայկական հարթությունից: Ա. Կիրակոսյանի գրքի բոլոր, մասնավորապես առաջին, բաժիններում հիմնավորվում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության հանդեպ իրականացված կոտորածներն ու տեղահանությունները ոչ միայն ցեղասպանություն էին, այլև դարձան «ցեղասպանություն» եզրույթի սահմանման և զարգացման հիմնաքարը:

Հանրագիտարանների տարբեր հոդվածների հատվածները հեղինակը ներկայացնում է կուռ տրամաբանությամբ: Նրա մեկնաբանությունների, հետևողական ու շաղկապվող շարադրանքի միջոցով ընդհանուր տեղեկատվության ծաղկաքաղը՝ անկախ տարբեր գլուխների բաժանման, վերածվել է ամբողջական պատկերի: Փաստորեն, սույն գիրքը Հայոց ցեղասպանության համառոտ պատմությունն է՝ նրա նախապատմության և նախադրյալների ընդգրկմամբ, պատճառների, իրականացման և հետևանքների հստակ նկարագրությամբ, պետությունների դիրքորոշման լուսաբանմամբ, ցեղասպանության մեկդարյա ժխտման ընթացակարգի ու ճանաչման գործընթացի, այդ թվում՝ ռազմական դատավարությունների մեկնաբանություններով հանդերձ:

Գրքի դրվատելի կողմերից է նաև այն, որ լուսաբանվում են Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության համեմատական մոտեցումները, ընդհանրությունները ու տարբերությունները, Հայոց ցեղասպանության վավերագրումը և այլն: Վերոնշյալը և այն, որ աշխատությունը ավարտվում է արվեստում ու գրականության մեջ Հայոց ցեղասպանության արտացոլմանը նվիրված

բաժնով, հաստատում են, որ այսօր աճում է գիտական հետաքրքրությունն այս հիմնախնդրի վերաբերյալ:

Կարելի է հավաստել, որ ամերիկյան հանրագիտարաններից քաղված՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող հիմնական նյութի զետեղումը մեկ գրքում փաստորեն վերածել է «Հայոց ցեղասպանություն» խորագրով յուրօրինակ համառոտ հանրագիտարանի կամ հանրագիտարանային բառարանի: Նման հրատարակությունն արդիական է և նոր վերլուծությունների հնարավորություն է ընձեռում: Համոզված ենք, որ այս գիրքն իր ուրույն տեղը կգրավի Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունների շարքում: Այն հետաքրքիր է, ճանաչողական, ինչպես նաև օգտակար թե՛ ընթերցող լայն շրջանների և թե՛ գիտաշխատողների համար, որոնց ուսումնասիրությունների իրականացմանն այն անտարակույս կնպաստի:

Ինչ խոսք, այս գրքի արժանիքներից է նաև հրատարակության լեզուն, որը կապահովի ընթերցող հասարակության լայն շրջանակ: Դրանով իսկ օտար ընթերցողին հնարավորություն է ընձեռվում ստանալ դյուրին և հավաստի, անմիջական և ճշմարիտ, նպատակային տեղեկություններ Հայոց ցեղասպանության մասին:

Ա. Կիրակոսյանի իրականացրած կարևոր հետազոտական աշխատանքը, որը որքան հայտնի է, չունի իր նախադեպը, արժանի է դրվատանքի: Կարծում եմ, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ այլ լեզուներով հրատարակված հանրագիտարանային նյութերի մշակման ու համախմբման այն լավ օրինակ կծառայի:

Ուստի, նպատակահարմար եմ գտնում առաջարկել ոչ միայն դրա թարգմանությունը հայերեն, այլև վերահրատարակությունը անգլերենով և մեծ տպաքանակով՝ աշխարհում այն տարածելու նպատակով, ոչ միայն մեր արդար Դատը մարդկության դեռևս անտեղյակ հանրությանը ներկայացնելու, այլև նմանօրինակ ոճրագործությունները՝ ցեղասպանությունները, կոտորածները, ահաբեկչական գործողությունները, կանխարգելելու համար:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ